HEXACO PI-R ԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐՑԱՐԱՆԻ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԻ ԸՆՏՐԱՆՔՈՒՄ

Սերոբյան Ա.Կ. (ԵՊՀ, Երևան, ՀՀ)
astghiks@ysu.am
Ներկայացման ամս. 31.07.2020
Գրախոսման ամս. 06.08.2020
Տպագրության ընդունման ամս. 15.09.2020

Անձնային գծերը բացատրող Մեծ հնգյակի մոդելին զուգահեռ զարգանում է անձի վեցգործոնային մոդելը: HEXACO PI-R (Honesty-Humility, Emotionality, Extraversion, Agreeableness, Conscientiousness, Openness to Experience Personality Inventory – Revised) հարցարանը ուղղված է չափելու վեց հիմնական գործոնները՝ Ազնվություն/Համեստությունը, Հուզականությունը, Էքստրավերտությունը, Բարյացակամությունը, Բարեխղճությունը, Լայնախոհությունը և 24 ենթագործոնները: Հետազոտության նպատակն է HEXACO PI-R հարցարանի տեղայնացումը հայկական ընտրանքի համար: Տեղայնացումը իրականացվել է քայլերի հետևյալ հաջորդականությամբ՝ երկու փորձագետների զուգահեռ թարգմանություն և համեմատություն, պնդումների փորձագիտական գնահատում և համապատասխանեցում անգլերեն տարբերակին, հարցարանի անցկացում, գործոնների և ենթագործոնների բաշխման ստուգում, անհրաժեշտության դեպքում պնդումների վերաձևակերպում, ինչպես նաև հուսալիության, հարցարանի կայունության, վալիդության ստուգում: Նշված քայլերի արդյունքում ստացված հոգեչափական պարամետրերը հնարավորություն են տալիս, որպեսզի HEXACO PI-R հարցարանի հայերեն տարբերակը օգտագործվի հետազոտություններ կատարելու համար:

Հանգուցային բառեր՝ *անձնային գծեր, անձի վեցգործոնային մոդել, հարցարանի տեղայնացում, HEXACO PI-R հարցարան:*

Անձնային գծերի մոտեցման ներկայացուցիչները կարծում են, որ գծերն ու վարքն ունեն հիերարխիկ կառուցվածք և անընդհատ փորձում են գտնել մի ընդհանուր դասակարգման համակարգ, որը բազմահազար անձնային բնութագրերը կխմբավորի ըստ ոլորտների [1]: Երկարատև հետազոտություններն ի վերջո բերեցին նրան, որ բացահայտվեց անձնային գծերի դասակարգման համընդհանուր համակարգ՝ Մեծ հնգյակը [1]: Անձնային գծերի բազմաթիվ հետազոտությունները մեծամասամբ ապացուցում են «Մեծ հնգյակի» ունիվերսալությունն ու ցույց տալիս, որ անկախ մշակույթից անձը նկարագրող հիմնական գործոնները հինգն են: Սակայն վերջին տարիներին մեծ

թափ է ստանում անձնային գծերը համակարգող մեկ այլ մոդել՝ անձի վեցգործոնային մոդելը (անգլ.՝ HEXACO) [7]: Անձնային գծերի հինգգործոնային մոդելը քննադատվում է նրա համար, որ ածականները վերցված են միայն անգլերենից: Այդ պատճառով մի շարք գիտնականներ Մ. Աշտոնի և Կ. Լիի ղեկավարությամբ նախաձեռնեցին լեզվաբանական հետազոտություն՝ կիրառելով տարբեր լեզուներ (օրինակ՝ խորվաթերեն, թուրքերեն, լեհերեն, կորեերեն, գերմաներեն և այլն), որպեսզի հաստատեն կամ հերքեն հինգգործոնային մոդելի ունիվերսալությունը [7]: Գործոնային վերլուծության արդյունքում երկրների մեծ մասում անձը նկարագրող հատկությունները խմբավորվեցին ոչ թե հինգ, այլ վեց գործոնի շուրջ, այսպիսով՝ հիմք հանդիսանալով անձի վեցգործոնային մոդելի ստեղծմանը: Այդ վեց գործոններն են՝ Ազնվություն/Համեստություն, Հուզականություն, Էքստրավերտություն, Բարյացակամություն, Բարեխղճություն, Լայնախոհություն: Էքստրավերտություն, Բարեխղճություն, Լայնախոհություն գործոնները իրենց բովանդակությամբ շատ նման են Մեծ հնգյակի համապատասխան գործոններին, Բարյացակամություն և Հուզականություն ունեն մի փոքր տարբերություններ, իսկ Ազնվություն/Համեստություն-ը լրիվ նոր գործոն է [3]:

Հետաքրքրականն այն է, որ բոլոր հետազոտություններում գործոնային վերլուծության արդյունքում չորս հիմնական գորոծոնները՝ Էքստրավերտությունը, Բարյացակամությունը, Բարեխղճությունը, Հուզականությունը նույն կերպ էին հանդես գալիս կամ դուրս բերվում: Ինչ վերաբերում է Լայնախոհություն գործոնին և շատ հետազոտություններում դուրս բերվող Ազնվություն/Համեստություն գործոնին, ապա դրանք մնացած գործոնների համեմատ այնքան էլ կայուն չեն [4]: Ազնվություն/Համեստություն գործոնի խնդիրն այն է, որ հետազոտությունների մի մասում այն գործոնային վերլուծության ժամանակ միավորվում է կամ Բարեխղճություն, կամ Բարյացակամություն գործոնների հետ և այնքան էլ կայուն չէ կրկնությունների նկատմամբ[5]: Սակայն ամեն դեպքում ուսումնասիրությունների մեծ մասը ապացուցել են վեց գործոնի առկայությունը: Թվարկված վեց գործոններից յուրաքանչյուրը իր հերթին կազմված է չորս ենթագործոնից [4]:

Ազնվություն/Համեստություն գործոնից բարձր արդյունքներ ունեցողները իրենց նպատակներին հասնելու համար չեն օգտագործում այլ մարդկանց, կարելի է ասել հակված չեն օրենքները խախտելու: Նրանք չեն սիրում ճոխ ու շքեղ կյանքը և հետաքրքրված չեն սոցիալական կարգավիճակը բարձրացնելով: Արտահայտվածության ցածր աստիճան ունեցող մարդիկ, ընդհակառակը, կարող են քծնել իրենց ուզածին հասնելու համար, դեմ չեն խախտելու օրենքները սեփական շահերի համար, հիմնականում առաջնորդվում են նյութական արժեքներով և անընդհատ փորձում են ցույց տալ իրենց անձի կարևորությունը [2]: Գործոնի ենթագործոններն են՝ անկեղծություն, արդարամտություն, ոչ ագահություն, չափավորություն:

Հուզականություն գործոնի բարձր արտահայտվածությամբ անձինք վախենում են ֆիզիկական վտանգներից, դժվար իրավիճակներում տագնապում են, կարիք ունեն հուզական աջակցության, ինչպես նաև հուզական կապվածություն ունեն այլ մարդկանց հետ: Գործոնի արտահայտվածության ցածր աստիճանն ուղեկցվում է սթրեսային իրավիճակներում վախի ու տագնապի բացակայությամբ: Այս տիպի մարդիկ կարիք չունեն կիսվելու իրենց խնդիրներով այլ մարդկանց հետ [4]: Հուզականության ենթագործոններն են՝ վախկոտություն, տագնապայնություն, հուզական կախվածություն, սենտիմենտալություն:

Էքստրավերտություն գործոնի բարձր արտահայտվածություն ունեցող մարդիկ դրական են տրամադրված իրենք իրենց, սիրում են առաջնորդել մարդկանց, հաճույք են ստանում սոցիալական հավաքներից ու շփումներից, կյանքով և էներգիայով լի են: Ընդհակառակը, գործոնի ցածր արտահայտվածության դեպքում անձը կարծում է, որ ինքն այնքան էլ հայտնի չի այլ մարդկանց մեջ, անհարմար են զգում, երբ հայտնվում են ուշադրության կենտրոնում, ակտիվ ու նախաձեռնող չեն, ինչպես նաև ավելի քիչ կենսախինդ են ու լավատես, քան մյուսները [6]: Էքստրավերտության չորս ենթագործոններն են՝ ինքնավստահություն, համարձակություն, շփվողականություն, աշխուժություն:

Բարյացակամություն գործոնի բարձր արտահայտվածություն ունեցող մարդիկ շուտ են ներում և մոռանում իրենց հասցված վիրավորանքը, մեղմ են ուրիշներին դատելիս, հակված են համագործակցության և փոխօգնության, հեշտությամբ կարգավորում են իրենց հույզերը: Ցածր արտահայտվածությամբ անձինք քինախնդիր են, սիրում են քննադատել, իրենց տեսակետը պաշտպանելիս կոպիտ են ու անզիջում, հեշտությամբ են ջղայնանում [2]: Բարյացակամության ենթագործոններն են՝ ներողամտություն, նրբանկատություն, ճկունություն, համբերատարություն:

Բարեխղճություն գործոնի բարձր արտահայտվածություն ունեցող անձինք կազմակերպում են իրենց ժամանակն ու միջավայրը այնպես, որ ամեն ինչ իր տեղում լինի, նպատակին հասնում են՝ աշխատելով նախօրոք գծած պլանով: Նրանք գործն անելիս աշխատում են ոչ մի սխալ ու վրիպակ թույլ չտալ և հետագայում մի քանի անգամ ստուգում են կատարած աշխատանքը: Նման մարդիկ որոշումն ընդունելուց առաջ ամեն ինչ երկար ժամանակ ծանր ու թեթև են անում: Ցածր արտահայտվածությամբ անձինք թափթփված են, դժվարությամբ են հետևում սահմանված գրաֆիկին, կարող են բավարարվել սխալներով աշխատանքից, խուսափում են բարդ խնդիրներ լուծելուց, ինչպես նաև որոշումները կայացնում են պահի ազդեցության տակ [6]: Բարեխղճության ենթագործոններն են՝ կազմակերպվածություն, ջանասիրություն, պերֆեկցիոնիզմ, խոհեմություն:

Լայնախոհություն գործոնի արտահայտվածությամբ մարդիկ իրենց բնույթով էսթետ են, գեղեցիկը գնահատող: Նրանք կարող են հաճույք ստանալ արվեստի գործ դիտելուց կամ ուղղակի հիանան բնության գեղեցկությամբ: Հետաքրքրված են գիտության տարբեր ճյուղերով, հակված են յուրօրինակ ու ոչ

ստանդարտ որոշումներ կայացնելուն, առօրյա կյանքում ազատորեն օգտագործում են իրենց երևակայությունը: Քիչ արտահայտվածությամբ անձիք այդքան էլ չեն տպավորվում արվեստի գործերից, չեն սիրում ինտելեկտուալ զրույցներ, իրենց հայացքներում ու որոշումներ խուսափում են նորարություններից ու ավելի հակված են գործելու ավանդական ձևերով [6]: Լայնախոհության ենթագործոններն են՝ արվեստասիրություն, հետաքրքրասիրություն, ստեղծարարություն, ոչ ավանդականություն:

Երբ համեմատում ենք անձը նկարագրող հինգգործոնային և վեցգործոնային մոդելները, ապա դրանց կառուցման հիմքում ընկած գործընթացները նույնն են՝ լեզվաբանական և գործոնային վերլուծություն: Տարբերությունները վերաբերում են նրան, որ Մեծ հնգյակի հիմքում ընկած են միայն անգլերենում օգտագործվող ածականներ, իսկ վեցգործոնային մոդելի հիմքում՝ այլ լեզուներից ևս: Մյուս կողմից վեց գործոնների տեսական դրույթների հիմքում ընկած են կենսաբանությունից եկած երկու հայեցակարգ: Առաջինը փոխադարձ և հարազատական ալտրուիզմն է, որով նկարագրվում են Ազնվություն/Համեստություն, Հուզականություն, Բարյացակամություն գործոնները [4], իսկ Երկրորդը՝ Էքստրավերտություն, Բարեխղճություն, Լայնախոհություն գործոնները, որոնք բացատրվում են անձի գործունեության երեք տարբեր ուղղություններում ներգրավվածությամբ [2]: Այսպես՝ Էքստրավերտություն գործոնը համապատասխանում է գործունեության այն ոլորտին, որը վերաբերում է սոցիալական հարաբերություններին, Բարեխղճություն գործոնը՝ հանձնարարությունների կատարմանը, Լայնախոհություն գործոնը՝ նոր մտքերի ստեղծմանը [4]:

Այսպիսով, ճիշտ է, Մեծ հնգյակի հետ կապված հետազոտությունները սկսվել են ավելի վաղուց և ինչ-որ չափով ապացուցել են նրա ունիվերսալությունը, սակայն վեցգործոնային մոդելը իր կառուցվածքով ավելի բազմամշակութային է և ընդգրկում է ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան լեզվամտածողության տարրեր:

Վեցգործոնային մոդելը չափող հիմնական գործիքը HEXACO PI-R հարցարանն է, որն ունի երկու տարբերակ՝ 100 հարցից բաղկացած և 60 հարցից բաղկացած:

Հոդվածում ներկայացված հետազոտության նպատակն է ներկայացնել HEXACO PI-R (100 հարց) հարցարանի հայերենով տեղայնացման գործընթացը: Հարցարանի տեղայնացումը իրականացվել է ԵՊՀ Անձ և սոցիալական միջավայր գ/հ լաբորատորիայի աշխատանքների արդյունքում:

Տեղայնացման գործընթացի սկզբում կատարվել է HEXACO PI-R անգլալեզու հարցարանի զուգահեռ անկախ թարգմանություն երկու փորձագետների կողմից անգլերենից հայերեն, այնուհետև համեմատվել են թարգմանված երկու տարբերակները, ինչի հիման վրա կազմվել է հայերեն հարցաթերթը: Թարգմանության փուլից հետո կատարվել է հետազոտություն՝ ստուգելու համար հարցարանի հուսալիությունը և վալիդությունը:

Հետազոտությանը մասնակցել են ընդհանուրը 259 հոգի 17-28 տարեկան երիտասարդներ: Մասնակիցների 34,7%-ը տղամարդ է, իսկ 65,3%-ը՝ կին (M-միջին տարիք՝ 20.1, StDev-տարիքի ստանդարտ շեղում՝ 2,286): Հետազոտության բոլոր մասնակիցները լրացրել են հարցաթերթ, որում ընդգրկված է եղել «HEXACO PI-R» հայերեն թարգմանված անձնային հարցարանը: Հարցարանը բաղկացած է 100 պնդումից, յուրաքանչյուր վեց մեծ գործոնի համար 16 պնդում: Յուրաքանչյուր մեծ գործոնը իր հերթին բաղկացած է չորս փոքր ենթագործոններից, որոնցից յուրաքանչյուրը չափվում է 4 պնդումով: Պնդումներից յուրաքանչյուրի համար մասնակիցը պետք է նշի, թե ինչ չափով է համաձայն դրա հետ: Համաձայնության աստիճանը չափվում է հինգմիավորանոց սանդղակով, որտեղ մեկ թիվը նշանակում է, որ ընդհանրապես համաձայն չէ, իսկ հինգը՝ միանշանակ համաձայն է: Հարցարանի հիմնական սանդղակներն են Ազնվություն/Համեստություն, Հուզականություն, Էքստրավերտություն, Բարյացակամություն, Բարեխղճություն, Լայնախոհություն, որոնք իրենց հերթին բաժանվում են 4 ենթագործոնների: Հարցարանն ունի լրացուցիչ սանդղակ՝ 4 պնդումով չափվող, որը հեղինակները կոչել են Ալտրուիզմ/Անտագոնիզմ: Այն ներառված չէ որևէ գործոնի մեջ և դիտարկվում է լրիվ առանձին, քանի որ ոչ միշտ է դուրս բերվում հետազոտությունների արդյունքում և այդ պնդումները դեռ գտնվում են հետազոտման և ուսումնասիրման փուլում: Այդ պատճառով մեր հետազոտության մեջ այդ 4 պնդումները ընդգրկված չեն: Արդյունքները հետագայում ենթարկվել են վերլուծության՝ օգտագործելով մաթեմատիկական վիճակագրության մեթոդները: Վերլուծության նախնական փուլում ստուգվել է բոլոր վեց սանդղակների և 24 ենթագործոնների հուսալիությունը Կրոնբախի ալֆայի գործակցով: Վեց մեծ գործոնների համար ալֆան ստացվել է 0,7-ից բարձր, ինչը բավարար է սանդղակը հուսալի համարելու համար [5], սակայն կային ենթագործոններ, որոնց հուսալիության գործակիցը բավականին ցածր էր ստացվել: Այդպիսի ենթագործոններից էին ոչ ավանդականությունը (α=0,282), ճկունությունը (α=0,481), տագնապայնություն (α=0,269), վախկոտությունը (α=0,491), ինքնավստահությունը (α=0,502), ներողամտությունը (α=0,509), նրբանկատություն (α=0,468), ստեղծարարություն (α=0,415): Նշված սանդղակներից առանձնացվեցին այն հարցերը, որոնք թույլ չէին տալիս, որ սանդղակն ունենա բարձր Կրոնբախի ալֆա գործակից, ինչի հետևանքով մոտավորապես 16 հարց վերանայվեց ու վերաձևակերպվեց: Դրանից հետո հարցարանը անցկացվեց երկրորդ անգամ:

Երկրորդ հետազոտությանը մասնակցել են ընդհանուրը 323 հոգի երիտասարդներ: Մասնակիցների 15.8%-ը տղամարդ է, իսկ 84.2%-ը՝ կին ($M_{տարիք}$=2.6, $StDev_{տարիք}$=5.726): Ընտրանքի մի մասը, այն է 68 հոգի, մասնակցել է նաեւ թեստ-ռեթեստային հետազոտությանը:

Վերլուծության նախնական փուլում ստուգվել է ստացված վեց մեծ գործոններից յուրաքանչյուրի և 24 ենթագործոնների բաշխվածության համապատասխանությունը նորմալ բաշխմանը:

Աղյուսակ 1. *HEXACO PI-R հարցարանի վեց հիմնական գործոնների նորմալ բաշխվածության չափանիշները, Կրոնբախի ալֆան եւ թեստ-ռեթեստային գործակիցը.*

	Ա/Հ	Հ	Է	ԲԿ	ԲԽ	Լ²
Միջին արժեք (M)	3,3	3,3	3,4	2,9	3,5	3,5
(StDev)	0,609	0,512	0,589	0,489	0,530	0,550
Շապիրո-Ուիլկի գործակից	0,988	0,987	0,985	0,991	0,955	0,985
Նշ. գործակից Շապիրո Ուիլկի համար	0,636	0,578	0,428	0,831	0,500	0,422
Կրոնբախի ալֆա(α)	0,832	0,680	0,817	0,738	0,797	0,727

Աղյուսակ 1-ում ներկայացված են միայն վեց մեծ գործոնների միջին արժեքներն ու ստանդարտ շեղումները, ինչպես նաև Շապիրո-Ուիլկի չափանիշն ու դրա նշանակալիության աստիճանը: Բաշխվածությունը համարվում է նորմալ, երբ Շապիրո-Ուիլկի չափանիշի նշանակալիության աստիճանը մեծ է 0,05-ից [5]: Այսինքն, ելնելով աղյուսակի տվյալներից, կարելի է ասել, որ բոլոր վեց գործոնները բաշխվել են նորմալ: Ինչ վերաբերում է ենթագործոններին, ապա դրանցից մի քանիսի մոտ նկատվել է շեղում նորմալ բաշխվածությունից: Սակայն տվյալ ենթագործոնների բաշխվածության կորերը վերլուծելիս պարզ է դարձել, որ խնդիրը մի քանի տվյալներն են, որոնք մնացած տվյալների բաշխվածությունից էականորեն շեղվում են (անգլ.՝ outlier): Այդ շեղվող մի քանի տվյալը հետագա վերլուծություններից հանվել են, ինչի հետևանքով հնարավոր է եղել, որպեսզի հետազոտության արդյունքները ենթարկվեն հետագա վիճակագրական վերլուծության:

Հարցարանի ներքին համաձայնվածությունը կամ որ նույնն է ներքին հուսալիությունը ստուգելու համար օգտվել ենք Կրոնբախի ալֆայի ցուցանիշից: Այն ցույց է տալիս, թե յուրաքանչյուր պնդում որքանով է համապատասխանում այն սանդղակին, որը չափում է: Իսկ հարցարանի կայունությունը կամ արտաքին հուսալիությունը ստուգվել է թեստ-ռեթեստային մեթոդով: Մեթոդի էությունն այն է, որ հետազոտվողների մի մասը նույն հարցարանը լրացրել են երկու անգամ երկու ամիս ընդմիջմամբ, այսինքն՝ կատարվել է կրկնակի թեստավորում [5]: Հետազոտությանը մասնակցել է 68 ուսանող ($M_{տարիք}$ =19.1, $SD_{տարիք}$=0.790, կանայք 98%):

Կրոնբախի ալֆայի գործակցի արդյունքները ՀԵՔՍԱԿՈ-ի յուրաքանչյուր մեծ գործոնի համար ներկայացված են Աղյուսակ 1-ում: Ինչպես երևում է աղյուսակում ներկայացված տվյալներից Կրոնբախի ալֆան վեց գործոնների

համար ստացվել է 0,7-ից բարձր: Նույն պատկերն է դիտվում 24 ենթագործոնների ալֆաների գործակիցները դիտարկելիս: Այսինքն՝ ստացվում է, որ պնդումների վերանայվելուց ր վերաձևակերպվելուց հետո սանդղակները դարձել ավելի հուսալի:

Ինչ վերաբերում է թեստ-ռեթեստային կորելյացիոն գործակցին, ապա այս դեպքում արդյունքները համարվում են հուսալի, եթե գործակիցը 0,75-0,8 է և ավելի [5]: ՀԵՔՍԱԿՈ-ի վեց գործոնները և 24 ենթագործոնները համապատասխանում են այդ չափանիշին, այսինքն հարցարանը կարող ենք համարել կայուն:

HEXACO PI-R հարցարանի հայերեն տարբերակի սանդղակների վալիդությունը ստուգելու համար յուրաքանչյուր սանդղակի համար իրականացվել է Հիմնական բաղադրիչների վերլուծություն (անգլ.՝ PCA կամ Principal component analysis), որտեղ դուրս բերվող գործոնների քանակը նշվել է 1: Ընդհանուր առմամբ իրականացվել է 30 մոդելների վերլուծություն: Ստացված մոդելները բացատրում են ամբողջի ցրվածության 23-68%-ը, Կայզեր-Մայեր-Օլկինի գործակիցը մոդելից մոդել տատանվում է 0,493-0,806, որը համարվում է ընդունելի [8], Բարտլետի գործակցի նշանակալիության աստիճանը բոլոր մոդելների համար փոքր է 0,05-ից [9, 10]: Ինչ վերաբերում է ամեն սանդղակը կազմող պնդումներին, ապա դրանց գործոնային գործակիցները յուրաքանչյուր սանդղակում տատանվում են 0,4-0,8: Բոլոր 6 մեծ գործոնների ու 24 ենթագործոնների համար վերը նկարագրված գործակիցները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. *HEXACO PI-R հարցարանի սանդղակների Հիմնական բաղադրիչների վերլուծության հիմնական վիճակագրական գործակիցները*

Ենթագործոնի անվանումը	Ցրվածություն %	Կայզեր-Մայեր-Օլկինի գործակից	Բարտլետի թեստ	Բարտլետի թեստի նշ. աստիճան
Ազնվություն/ Համեստություն	37.5	0.806	409,22	0,0001
Անկեղծություն	57,1	0,738	74,99	0,0001
Ազնվություն	53,4	0,681	66,16	0,0001
ոչ ագահ	67,9	0,791	138,31	0,0001
Համեստություն	47,1	0,611	44,48	0,0001
Հուզականություն	22,5	0,681	283,6	0,0001
վախկոտություն	49,1	0,677	45,43	0,0001
տագնապայնություն	47,3	0,581	42,88	0,0001
կախյալություն	52,4	0,700	63,29	0,0001
զգացմունքայնություն	46,4	0,640	37,81	0,0001
Էքստրավերտություն	33,1	0,806	484,23	0,0001
ինքնազնահատական	48,1	0,683	39,43	0,0001
սոցիալական համարձակություն	49,7	0,683	50,16	0,0001
մարդամոտություն	64,2	0,752	111,06	0,0001
կենսուրախ	68,3	0,788	134,29	0,0001
Բարյացակամություն	24,2	0,642	382,36	0,0001
ներողամիտ	48,2	0,633	48,78	0,0001
մեղմ/նրբանկատ	46,1	0,613	39,39	0,0001
ճկունություն	35,8	0,493	17,73	0,0001
համբերատարություն	64,6	0,747	118,58	0,0001
Բարեխղճություն	29,4	0,769	376,36	0,0001
կազմակերպվածություն	50,1	0,546	62,62	0,0001
աշխատասիրություն	43,6	0,618	31,14	0,0001
պերֆեկցիոնիզմ	50,9	0,716	47,82	0,0001
խոհեմ	53,9	0,673	74,22	0,0001
Լայնախոհություն	26,9	0,703	383,64	0,0001
էսթետ	47,8	0,685	39,65	0,0001
հետաքրքասեր	52,4	0,634	62,4	0,0001
կրեատիվ	55,8	0,680	81,09	0,0001
ոչ ավանդական	49,9	0,610	35,09	0,0001

Այսպիսով՝ տեղայնացման գործընթացի արդյունքում ստացված հոգեչափական պարամետրերը բավարար են, որպեսզի HEXACO PI-R հարցարանի հայերեն տարբերակը օգտագործվի հետազոտություններ կատարելու համար:

Գրականություն

1. **Первин Л., Джон О**. Психология личности: Теория и исследования/ Пер. С англ. М.С. Жамкочьян, под ред. В.С. Магуна – М.: Аспект Пресс, 2001.

2. **Ashton, M. C., Lee, K., de Vries, R. E.** The HEXACO Honesty-Humility, Agreeableness, and Emotionality Factors: A review of research and theory. Personality and Social Psychology Review, 18,2014, pp. 139-152:
3. **Ashton M., Lee C.** A theoretical basis for the major dimensions of personality. European journal of personality, 15, 2001, pp. 327-353:
4. **Ashton, M. C., Lee, K.** Empirical, theoretical, and practical advantages of the HEXACO model of personality structure. *Personality and Social Psychology Review, 11*, 2007, pp. 150-166:
5. **Howitt D., & Cramer D.** An introduction to statistics in psychology. Harlow, England: Prentice Hall., 2011:
6. **Lee, K., Ashton, M. C.** Psychometric properties of the HEXACO personality inventory.//Multivariate Behavioral Research, 39, 2004, pp. 329-358:
7. **Lee, K., Ashton, M. C.** The HEXACO personality factors in the indigenous personality lexicons of English and 11 other languages. *Journal of Personality, 76*, 2008, pp. 1001-1053:
8. **Osborne, Jason.** Best Practices in Exploratory Factor Analysis., 2014, pp. 104-119:
9. **Peter S.** Advice on Exploratory Factor Analysis, 2016, https://www.researchgate.net/publication/319165677_Advice_on_Exploratory_Factor_Analysis (Цjg` 07.07.2020)
10. **Williams, B., Brown, T., & Onsman, A**. Exploratory factor analysis: A five-step guide for novices. Australasian Journal of Paramedicine, 8(3), 2010, pp. 4-6:

АДАПТАЦИЯ ЛИЧНОСТНОГО ОПРОСНИКА HEXACO PI-R НА АРМЯНСКОЙ ВЫБОРКЕ

Серобян А. К. (ЕГУ, Ереван, Армения)

Параллельно с моделью Большой Пятерки, которая объясняет черты личности развивается шестифакторная модель личности. Опросник HEXACO-PI-R (HEXACO Personality Inventory – Revised) предназначен для диагностики шести диспозиционных черт личности (факторов) – Честности, Эмоциональности, Экстраверсии, Доброжелательности, Добросовестности и Открытости новому опыту. Цель нашего исследования состояла в адаптации опросника на армяноязычной выборке. Этапы адаптации опросника на армянской выборке включали: паралелльный перевод; экспертную оценку содержания утверждений и их соответствия английскому оригиналу; анализ разброса по отдельным утверждениям, фасеткам и факторам и при необходимости коррекция формулировок утверждений; проверка надежности и валидности опросника. Таким образом, психометрические характеристики адаптированного опросника

HEXACO-PI-R получились удовлетворительными и не препятствуют его использованию на армянской выборке.

Ключевые слова: *личностые черты, шестифакторный модел личности, адаптация опросника, опроснк HEXACO PI-R*

ADAPTATION OF HEXACO-PI-R TO THE ARMENIAN SAMPLE

Serobyan A. K. (YSU, Yerevan, Armenia)

Six-factor personality traits model is developing in parallel with the Big Five. The HEXACO-PI-R (HEXACO Personality Inventory - Revised) questionnaire is designed to diagnose six dispositional personality traits – Honesty/Humility, Emotionality, Extraversion, Agreeableness, Conscientiousness and Openness to Experience. The purpose of our research was the adaptation of the HEXACO PI-R questionnaire to the Armenian sample. The stages of the questionnaire adaptation to the Armenian sample included: parallel translation; expert assessment of the content of the statements and their compliance with the English original; analysis of the normal distribution of the factors and facets and, if necessary, statements correction; checking the reliability and validity of the questionnaire. Thus, the psychometric characteristics of the adapted HEXACO-PI-R questionnaire turned out to be satisfactory and do not prevent its use in the Armenian sample.

Key words: *personality traits, six factor model of personality, questionnaire adaptation, HEXACO PI-R questionnaire.*